« Զկնի արքեպիսկոպոսին Նիկողայոսի[1] ոչ շատ յամեցեալ և ինքն ի Հռովմ, դառնայ « ի Լէսպոլիս. բայց զի Նիկողայոս առոյգ էր և առողջ, առեալ զհրաման ի Ս. « Յողովոյն երթայ ի Հայաստան քարոզելոյ աղագաւ. ուր ընդ ամս իբր տասն « տեղ » (էջ 143)։ Սոյն Նիկողայոս արքեպիսկոպոսն է որ Ս. Յողովոյն թոյլատրութեամբ իրեն յաջորդ կ'ընտրէ և կը ձեռնադրէ իւր աշակերտը[2] զՏէր Վարդան Յովնանեան, իբր տիտղոսաւոր Եպիփանիոյ « և առեալ զիշխանութիւն ի Սրբազան « Փափէն, զպարգևս զանազանս և զմակագրութիւն ընտանի և առընթերակաց Բրէլաղի « և Գավալերի Ս. Միքայելի, դառնայ ի Լէսպոլիս։ Անդէ բազում ուղղութիւնս, « զայցարարութիւնս եկեղեցեաց, զեղբայրակցութիւն Ս. Գրիգորի Լուսաւորչին և զԱ- « տուածածնին սահմանէ և հաստատէ ի Լէսպոլիս ». (Անդ). Յաջորդ բացատրութենէն ինքնին կը հասկցուի որ Վարդան եպիսկոպոս դարձեալ Հայաստան դարձած է, ու միայն « Լուեալ զմեռանելն Նիկողայոսի արքեպիսկոպոսին Լէսպոլսի, հնարիւք ելեալ ի Հայաստանեաց՝ գայ ի Լէսպոլիս և տիրէ աթոռոյն, զոր ընդ ամս 29 կառավարէ բարի վարուք »։ Նոյն տարւոյն մէջ Իննովկենտիոս ԺԱ.էն կ'ընդունի արքեպիսկոպոսութեան տիտղոս և եմիփորոն (էջ 144)։

Իր առաջնորդական գլխաւոր գործերէն մին պէտք է համարիլ 1689 հոկտ. 10ին գումարած գաւառական ժողովը Լովնի մէջ, « ու քաշվեցան, կ'ըսէ, [անշուշտ « եկան, ամփոփուեցան, կ'ուզէ ըսել] յամէն քաղաքէ քահանայք. ուր Դեր. Նուն- « ցիուսն Գանդէլմի բրէվիտէնս կ'լայ։ Այս ժողովքին մէջ արարին, որ Պատարագատետր « սրբագրվի ու տպվի ի Հռոմ, և Տօնացոյցն այլ, և ուրիշ բաներ. և այսպէս խրկեցին « զասոնք ի Հռոմ. ու խնդրեցին զՍուրբ Ժողովն, որ զՏէր Աստուածատուր եպիսկոպոսն « ձէնէ [այսինքն ձայնեն] ի Հռոմ, սրբագրէ զայս գրքերս, ու տպել տայ» (էջ 129)։ Փիչ մը վարը յուսախաբութիւնը կը կարդանք. « Աստուածատուր եպիսկոպոսն յայս « տարի եկաւ ի Հռոմ, մնաց ի հոն 8 տարի. դարձաւ ի Լոփն 1698ին. չի կարցաւ « իր մ'ալ հաստատելու. զէրամ, սուրբ Ժողովքն չուզաց փոփոխութիւն անելու « վասն արևելեան Հայերուն, որ ալիժօվ չխոուին, ու ալիժօվ, զի Բաղէր Պոնէզանայ « Բրէքէֆդն (ինչպէս որ լսեմ ամ,) զամենն այն բանը կ'ալիրէր »։

Իր վերջին տարիներու գործունէութեան մասին յիշատակագիրը կ'ըսէ։

1698ին « Աստուածատուր եպիսկոպոսն յայս տարի ի Հռոմայ դարձաւ ի Լոփն, « սուրբ Ժողովին հրամանաւն· գօտիւղոր (օգնական) ու սուգցէսոր (յաջորդ) արքե- « պիսկոպոսութեան Լովայ. կէրամ Վարդան արքեպիսկոպոսն շատ սուրբիքօվաղ « արավ, պատճառ դնելով զիրէն ծերութիւնն ու զտկարութիւնն։ Բայց շիտակն « ասելով, ինքն՝ օտար երկրի ըլլալով, ու զամենայն բան Բաղերնէրուն (լատին « կրօնաւորք) խրերոքն անելով, շատ անգամ զժողովրդին սիրտն ազրեց. յետքը ոչ « ժողովուրդն, ոչ քահանայք աչք (պատիւ, յարգանք) չէին դնել. ասոր համար « հնարքով զԱստուածատուր եպիսկոպոսն ի հոս երեր, և զամենայն իշխանութիւնն « ձեռքն եդիր. զատ (զատ, բացի) զիրէն աթոռն ու զարհիեպիսկոպոսութեան « դիդուլն (titre) (էջ 130)»։

Յատկապէս կ'ընծայուի Վարդան արքեպիսկոպոսին Քաջալերական թուղթ մը առ Եւդոկիացիս ուղղուած, որմէ Հ. Ալիշան կը քաղէ իր «Կիլիկիոյ»ին մէջ ժամանակագրական դէպքերն ու ազգային եկեղեցական անցուդարձը, յորս էն գլխաւորն է որ 1626ին Մելքիսէթ Էջմիածնի կաթողիկոսը Լէսպոլիս կ'երթայ, ըստ ժամանակա-

---

1. Ասելի ծանօթ՝ Նիկոլ անուամբ։
2. Զամչեան. Պատմ. Հայոց Գ. էջ 630։